ԳԱՅԱՆԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՍՅՈՒՆԵՑԻ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Հոդվածում ներկայացված են Սյունյաց աշխարհում ծնված կամ արմատներով Սյունեցի տաղանդավոր կոմպոզիտորներ Գրիգոր Սյունին, Աշոտ Սաթյանը, օպերային հանրահայտ երգչուհի Տաթևիկ Սազանդարյանը, մեր օրերում աշխատող ու ստեղծագործող, երաժիշտ–մանկավարժներ Յուրա Յուզբաշյանը և Արկադի Շեկունցը: Մանրամասնորեն լուսաբանված է նրանց ստեղծագործական և հասարակական գործունեությունը, որը նպաստեց 20-րդ դարի հայ մշակույթի զարգացմանը և արժևորմանը:

Բանալի բառեր՝ *Սյունիք, 20-րդ դար, երգ, խմբերգ, օպերա, մանկավարժություն, Գրիգոր Սյունի, Աշոտ Սաթյան, Տաթևիկ Սազանդարյան, Յուրա Յուզբաշյան, Արկադի Շեկունց:*

«Սյունիքն ամբողջովին լեռների մեջ է, լեռներն էլ՝ ամպերի մեջ: Նրանց սուր գագաթներն, ասես, տիտանական բռունցքներ լինեն, ուղղված դեպի երկինք, ըմբոստ սյունեցիների բռունցքները՝ ընդդեմ այդ քարքարոտ երկրին դարեր ի վեր բաժին ընկած անարդարությունների, հողը՝ քիչ, բախտը՝ քիչ, բնության, հայրենի և օտար տերերի բերած աղետներն՝ ինչքա՜ն ասեք»[1]:

Անհիշելի ժամանակներից Սյունիքում հայ մարդն է ապրում, շինարար ու ստեղծագործ մարդը: Նա աշխատել է ու կերտել, ապառաժների վրա հաց է աճեցրել, հոյակերտ ամրոցներ ու տաճարներ կառուցել: Գարնան արևոտ օրերին երգեր է հյուսել, ձմռան խուլ գիշերներին՝ լեգենդներ հորինել:

Սակայն այս խստաշունչ բնություն ունեցող լեռնաստանը տվել է նաև շատ տաղանդավոր արվեստագետներ՝ գրողներ, նկարիչներ, կոմպոզիտորներ, երաժիշտ-կատարողներ, երաժիշտ-մանկավարժներ, որոնք նշանակալի ավանդ են ունեցել հայ մշակույթի զարգացման գործում: Պատմական տեղեկությունները վկայում են, որ, դեռ 4-րդ դարից սկսած, Սյունյաց աշխարհի դպրոցներում մեծ ուշադրություն էին դարձնում արվեստին մասնավորապես երգ-երաժշտությանը, և՛ Գլաձորի, և՛ Տաթևի համալսարաններում մեծ կարևորություն են տվել երաժշտությանը: Ճիշտ է՝ այդ ժամանակաշրջանում ուսուցումը կատարվում էր հունարեն, ասորերեն, բայց հայ երգարվեստը զարգանում էր հիմնականում բանավոր եղանակով, մայրենի լեզվով:

«5-րդ դարասկզբին Մեսրոպ Մաշտոցը հայ գրերի ստեղծումից հետո իշխաններ Վաղինակի և Վասակի օգնությամբ Սյունիքում հիմնում է հայագիր դպրոցներ, որտեղ ուսուցանվում էին թե՛ հայ գրերը, թե՛ հայոց երգերը: Սյունյաց դպրոցներում է կրթություն ստացել միջնադարի հայ մտավորականության մեծ մասը: Այստեղ երաժշտությունը համարվում էր սիրելի առարկա և լուսավորության տարածման կարևոր աղբյուներից մեկը: Այդ դպրոցները հայտնի էին իրենց մանկավարժներով՝ Մովսես Քերթող Սյունեցի, Ստեփանոս և Սահա-

1 Սովետահայ բեմի վարպետներ, Տաթևիկ Սազանդարյան, ՀԹԸ հրատ., Երևան, 1959, էջ 1:

կանդուխտ Սյունեցիներ, Գրիգոր Տաթևացի, Առաքել Սյունեցի, որոնք ստեղծում են բազմաթիվ դպրոցներ և ուսուցանում հայ գիրն ու երգը»[1]:

Նկարագրելով Սյունիքի մշակութային կյանքը՝ չպետք է մոռանալ նաև գիտությունը, մշակույթը սերունդներին փոխանցելու նրանց սովորույթի մասին: Պատահական չէ, որ այսօր էլ Սյունյաց աշխարհը հարուստ է գիտնականներով, գրողներով, կոմպոզիտորներով, երաժիշտ-կատարողներով և մշակույթի այլ բնագավառների անվանի մարդկանցով:

Այժմ անդրադառնանք 20-րդ դարում Սյունիքում ծնված կամ արմատներով սյունեցի մի շարք հայտնի երաժիշտների ստեղծագործություններին:

Հայ կոմպոզիտորների շարքում իր ուրույն տեղն ունի կոմպոզիտոր և խմբավար Գրիգոր Սյունին (Գրիգոր Միրզայանը, 1876-1939թթ), չնայած նա ծնվել է Գանձակ գավառի Գետաբեկ գյուղում, բայց սերում է Խնձորեսկի Մելիքների տոհմից, Գրիգորի պապի հայրը՝Մելիք Հովհաննես Միրզաբեկյան Սյունին, նույն ինքը՝ աշուղ Թեյմուրը, Պարսից Ֆաթալի շահի հրավերով երկար տարիներ անցկացրել է նրա պալատում, երգել ու հեղինակել է պարսկական երգեր: Շարունակելով հոր արվեստը՝ Թեյմուրի զավակներից մեկը Խնձորեսկից տեղափոխվում է Շուշի, դառնում աշուղ Դադասի Սյունեցի Գրիգորի պապը, իսկ հայրը՝ Հովհաննեսը բանաստեղծ-երգիչ և մանրանկարիչ էր՝աշուղ Վարանդեցի: Սերելով աշուղների տոհմից, օժտված լինելով հնչեղ ձայնով ու երաժշտական վառ ընդունակություններով՝Գրիգորը վաղ հասակում տարվում է երաժշտությամբ: Նրա մանկությունը անցել է Շուշիում, որտեղ և ստացել է տարրական կրթություն, այնուհետև ընդունվել Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, ծանոթացել դեռևս ուսանող Կոմիտասի հետ: Ճեմարանում նրան դասավանդել են Ք. Կարա-Մուրզան և Մ. Եկմալյանը, որոնք, տեսնելով Գ. Սյունու տաղանդը, հորդորում են նրան ուսումը շարունակել Թբիլիսիում, Մոսկվայում կամ Պետերբուրգում:

Հետևելով իր մեծ ուսուցիչների խորհրդին՝ Գ. Սյունին 1898թ. ընդունվում է Պետերբուրգի կոնսերվատորիան՝ Ն. Ռիմսկի-Կորսակովի դասարանը: Նրան դասավանդել են նաև ռուս մեծ կոմպոզիտորներ Ա. Լյադովը և Ա. Գլազունովը: Այդտեղ նա ձեռք է բերում երաժշտատեսական խորը գիտելիքներ և դառնում պրոֆեսիոնալ կոմպոզիտոր: Ուսանողական տարիներին ղեկավարում է նաև տեղի հայկական եկեղեցու երգչախումբը: Կոնսերվատորիան ավարտելուց հետո՝ 1904թ.-ին վերադառնում է Անդրկովկաս և սկսում է երաժշտական-հասարակական եռանդուն գործունեություն ծավալել, կազմակերպում և ղեկավարում է ինքնագործ երգչախմբեր և համերգներ տալիս, այնուհետև աշխատում է Թբիլիսիի Ներսիսյան դպրոցում որպես երաժշտության ուսուցիչ և ուսանողական երգչախմբի ղեկավար՝ փոխարինելով իր ուսուցչին՝ Մ. Եկմալյանին:

Գ. Սյունին եղել է տարբեր երկրների հայաշատ վայրերում կազմակերպել սիրողական երգչախմբեր և համերգներ տվել՝ ամենուրեք հնչեցնելով հայ երգը: Համերգային գործունեությանը զուգահեռ՝ նա շրջում է գյուղական վայրեր և ձայնագրում բազմաթիվ ժողովրդական երգեր ու պարեղանակներ, որոնք հետագայում նյութ են ծառայում իր ստեղծագործությունների համար:

20-րդ դարի առաջին երկու տասնամյակը Գ. Սյունու ստեղծագործական

1 **Յուզբաշյան Յ.**, Երաժշտությունը Սյունաց աշխարհի դպրոցներում, Պատմաբանասիրական հանդես, հ.3, Երևան, 1962, էջ 1:

կյանքում նշանավորվում է հայ ժողովրդական երգերի մշակմամբ (1904թ.-ին լույս է տեսնում «Հայ ժողովրդական երգեր» ժողովածուն), երաժշտաթատերական գործերով, երգերով, ռոմանսներով, գործիքային ստեղծագործություններով: Նրա երգային և խմբերգային մշակումները ցույց են տալիս, որ նա նրբորեն ու խորությամբ է զգում հայ ժողովրդական երգի առանձնահատկությունները և իր մշակումներում դրանք պահպանելով՝ հասնում է ոճական անաղարտության: Այդ է պատճառը, որ նրա երգերից շատերը՝ «Սարերի հովին մեռնեմ», «Սարեն կուգա ձիավոր», «Ալագյազ», «Ինձ մի խնդրիր», մշտական տեղ են գրավում համերգային երգացանկերում: Սակայն քաղաքական իրադարձությունների ընթացքը նրան տանում է ԱՄՆ, որտեղ էլ անցնում է նրա հետագա ողջ կյանքը: Բնակվելով Ֆիլադելֆիայում և շրջելով ԱՄՆ-ի հայաբնակ վայրերում՝ Գ. Սյունին շարունակում է իր երաժշտահասարակական գործունեությունը, կազմակերպում է երգչախմբեր, համերգներ տալիս, ամերիկահայ Հարություն Մեհրապյանի հետ մեկտեղ հիմնում է «Ամերիկահայ երաժշտական միությունը», որն արգասաբեր աշխատանք է տանում հայ գաղթօջախներում: Ապրելով հայրենիքից դուրս՝ նա միշտ հետաքրքրվում և օժանդակում է հայրենիքի արվեստի օջախներին, մասնավորապես օգնում է Երևանի նոր կազմավորվող կոնսերվատորիային՝ Հայաստան ուղարկելով սիմֆոնիկ նվագախմբի համար գործիքներ, նորաբաց երաժշտական հրատարակչության համար տպագրական գործիքներ և թուղթ, որի կարիքը շատ էր զգացվում այդ տարիներին:

Գ. Սյունին իր ամբողջ ստեղծագործական գործունեությամբ, մասնավորապես ժողովրդական երգերի մշակմամբ զգալի դեր է կատարել հայ պրոֆեսիոնալ երաժշտության ազգային ոճի բյուրեղացման գործում, նրա ստեղծագործությունները հայ խմբերգային երաժշտության դասական ժառանգության մասն են կազմում: Ցավոք, նրա երաժշտական ժառանգությունը մինչև օրս լրիվ հավաքված, ուսումնասիրված, հետևաբար և գնահատված չէ:

Սյունեցի կոմպոզիտորների հաջորդ մեծ տոհմը՝ Սաթյանների տոհմն է, որոնք հայ երաժշտարվեստին տվել են մի շարք տաղանդավոր կոմպոզիտորներ՝ Ա. Սաթյան, Արամ Սաթունց, Արամ Սաթյան, որն այժմ ղեկավարում է ՀՀ կոմպոզիտորների և երաժշտագետների միությունը և մեծ հաջողությամբ ստեղծագործում է, կոմպոզիտոր է նաև նրա որդին Դավիթ Սաթյանը: Ցայժմ այս տոհմում հաշվվում է 7 կոմպոզիտոր:

Սովետահայ երգային ստեղծագործության նշանավոր վարպետներից է Աշոտ Սաթյանը, որի անունը լայնորեն հայտնի է ոչ միայն Հայաստանում, այլև սփյուռքահայ կենտրոններում: Իր հուզառատ, գողտրիկ, հեշտությամբ հիշվող և երգվող երգերը անչափ մեծ գեղագիտական հաճույք են պատճառում ունկնդրին:

Իբրև արվեստագետ՝ Ա. Սաթյանը ձևավորվեց Խորհրդային Հայաստանում և իր ստեղծագործական աշխատանքով հասավ մեծ ճանաչման, որը պայմանավորված է նրա երաժշտական ստեղծագործության առանձնահատկություններով, հայ ժողովրդական երաժշտության ինտոնացիոն ու ռիթմական հարուստ գանձարանի հետ սերտ կապով: Բացի այդ՝ կոմպոզիտորի ժողովրդայնությանը մեծապես նպաստել է նաև այն հանգամանքը, որ նա փայլել

է հատկապես երգային ստեղծագործության և կինոերաժշտության բնագավառում: Թե՛ մեկը և թե՛ մյուսն իրենց բնույթով մատչելի են ժողովրդական լայն զանգվածներին և կատարվելով ամենուրեք՝ միանգամից հեղինակին բերում են լայն ճանաչում: Նրա բազմաթիվ երգերը հենց առաջին կատարման պահից խոսում էին ունկնդիրների սրտերի հետ, հուզում նրանց, համակում առանձին ջերմությամբ, դառնում հարազատ ու անբաժանելի: Կոմպոզիտորը ոգևորության աղբյուր էր գտնում ժողովրդի մեջ, սնվում նրա ստեղծած երաժշտական գանձերից, կերտում նորանոր երաժշտական ստեղծագործություններ, իսկ ժողովուրդը սիրով էր ընդունում կոմպոզիտորի ստեղծագործությունները և երգում ամենուրեք:

Աշոտ Սաթյանի դարբին հայրը՝ վարպետ Մովսեսը, Խնձորեսկից էր, թառահար, չդիմանալով կյանքի դաժան պայմաններին՝ լքում է իր ծննդավայրը և տեղափոխվում Մերվ քաղաքը (այժմ՝ Թուրքմենստանի Հանրապետության Մարի քաղաք), որտեղ և 1906 թ. հունվարի 18-ին ծնվում է Աշոտը: Հետագայում նրանց ընտանիքը փոխադրվում է Բաքու, որտեղ Աշոտը ծառայում է բանակում նախ՝ որպես զինվորական նվագախմբի երաժիշտ, ապա՝ ղեկավար (կապելմեյստեր): Զինվորական ծառայության տարիները նրա համար եղան ոչ միայն կյանքի դպրոց, այլև դարձան երաժշտության հետ ավելի սերտորեն կապվելու, նվագախմբային երաժշտության բնագավառում փորձ կուտակելու տարիներ, որի արդյունքում ստեղծեց հիանալի քայլերգեր փողային նվագախմբի համար: Սաթյանի երաժշտական կրթության ձեռքբերման ճանապարհին կարևոր դեր է խաղացել այն շրջանը, երբ նա սովորում էր Բաքվի Հայարտանը գործող երաժշտական ստուդիայում՝ կոմպոզիտոր Ա. Մայիլյանի ղեկավարությամբ: Բայց իբրև կոմպոզիտոր ու դիրիժոր՝ նա վերջնականապես ձևավորվեց Երևանում, երբ 1930–1936 թթ. ընթացքում երաժշտական բարձրագույն կրթություն ստացավ Երևանի Պետական կոնսերվատորիայում: Կոմպոզիցիայի գծով նրա ղեկավարներն էին կոմպոզիտորներ Հ. Ստեփանյանը, Ս. Բարխուդարյանը և Վ. Տալյանը, իբրև դիրիժոր՝ նա դաստիարակվեց պրոֆ. Կ. Սարաջևի դասարանում՝ հաղորդակից դառնալով ռուսական ու արևմտաեվրոպական դիրիժորական արվեստի ավանդույթներին, որոնց լավագույն կրողներից մեկն էր հենց ինքը՝ Սարաջևը:

Ուսման տարիներին, ինչպես և հետագայում Սաթյանը (1930-39թթ) աշխատել է Գ. Սունդուկյանի անվան Պետական թատրոնում որպես երաժշտական մասի ղեկավար: Գլխավորելով թատրոնի նվագախումբը և երաժշտություն գրելով դրամատիկական ներկայացումների համար՝ նա ստեղծագործական աշխատանքի զգալի փորձ կուտակեց հետագա աշխատանքի համար, հատկապես կինոերաժշտության բնագավառում: Այս տարիներին նա երաժշտություն գրեց բազմաթիվ բեմադրությունների (51) համար՝ Բոմարշեի «Ֆիգարոյի ամուսնություն կամ խելահեղ օր» (1933), Գոգոլի «Ռևիզոր» (1934), Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար», Հ. Պարոնյանի «Ատամնաբույժն արևելյան» (1935), Ա. Օստրովսկու «Ամպրոպ» (1936), Ֆ. Շիլլերի «Սեր և խարդավանք» (1938) և այլն: Պիեսների այդ թվարկումից դժվար չէ տեսնել, որ կոմպոզիտորը գործ ուներ տարբեր ժանրերի, տարբեր բնույթի ու բովանդակության գործերի հետ, և որը նրանից պահանջում էր ուժերի լարում, ստեղծագործական երևակա-

յություն ու թռիչք ստեղծելու համար այնպիսի երաժշտություն, որը նպաստեր բեմադրության գեղարվեստական ամբողջացմանը: Այդ տարիներին Սաթյանի երաժշտական ստեղծագործության մեջ առավել նշանակալից են 1940-ականները (1939—1947), երբ նա դարձավ Հայկինոյի երաժշտական մասի ղեկավար և հիմնականում նվիրվեց կինոերաժշտության ստեղծման գործին: Այս տարիներին ինչպես և հետագայում, նա երաժշտություն է գրել տարբեր բնույթի բազմաթիվ (16) կինոնկարների համար՝ «Դավիթ-Բեկ», «Արարատյան դաշտի աղջիկը», «Մեր կոլխոզի մարդիկ», «Ո՞ւմ է ժպտում կյանքը», «Երկիր հարազատ», «Անահիտ» և այլն: Դժվար էր տիրապետել կինոյի յուրօրինակությանը, գտնել առավել նպատակահարմար ձևեր ու արտահայտչամիջոցներ և երաժշտության օգնությամբ նպաստել կինոնկարի գեղարվեստական մակարդակի բարձրացմանը: Սակայն տարիների ընթացքում նա հետզհետե բյուրեղացրեց իր ոճը և հայկական կինոերաժշտության մեջ ստեղծեց նոր տիպ՝ երգային կինոնկարի տիպը: 1948-1952թթ-ին Սաթյանը եղել է նաև Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ:

Չնայած Ա. Սաթյանը ստեղծագործել է երաժշտական տարբեր ժանրերում, սակայն անգնահատելի է նրա վաստակը հատկապես լիրիկական երգի ասպարեզում, նա ճանաչվել է իբրև սովետահայ երգարվեստի իսկական վարպետ: Երգն այն կարևորագույն բնագավառն է, որտեղ ձևավորվում է նրա ինքնատիպ, վառ անհատական լեզուն ու ոճը: Սաթյանը քնարերգու-կոմպոզիտոր է՝ հետաքրքրությունների լայն շրջանակով: Նրան հուզում է մարդը՝ իր հոգեկան հարուստ կյանքով ու էությամբ: Դա պայմանավորում է նրա արվեստի թեմատիկ բազմազանությունը՝ սիրային քնարերգություն `«Աղբյուրի մոտ», «Սիրո երգ», «Արդյոք գիտես», մարդկանց ստեղծարար աշխատանքի գովերգում՝ «Աշխատանքային երգ», հայրենասիրություն՝ «Իմ Հայաստան», «Կենաց երգ», «Ես իմ անուշ Հայաստանի», որը հետագայում դարձավ հանրապետական հեռուստատեսային հաղորդումների խորհրդանիշը:

Սաթյանի երգերին բնորոշ են նաև կառուցվածքային առանձնահատկությունները՝ հիմք ընդունելով քառյակային ձևը՝ նա ընդարձակում է նրա պայմանները, հասցնում է այն 3-4 կամ ավելի պարբերություններ ունեցող ձևի: Քառյակային ձևի լայնացնելու նպատակով նա դիմում է նաև երգի մի քանի պարբերությունների կրկնությանը, ընդ որում՝ տպավորությունը ավելի արտահայտիչ դարձնելու համար այդ կրկնությունները կատարում է երգչախումբը՝ օրինակ՝ «Մարտիկի երգը», «Խաղողաքաղը», «Լեռան աղջիկը» և այլն:

Կոմպոզիտորը, գիտակցելով, որ երգի հաջողության համար բացառիկ կարևոր նշանակություն ունի գրական հենքի ընտրությունը, խստապահանջ է եղել երգերի գրական տեքստերի, նրանց գեղարվեստական արժեքների նկատմամբ: Դրանով է պայմանավորված նրա համագործակցությունը բանաստեղծ Գ. Սարյանի հետ, որի քնարերգությանը բնորոշ է խոսքի հակիրճությունը, պատկերավորությունը, ինքնատիպ ռիթմիկան ու հարազատությունը ժողովրդական բանահյուսությանը: Ահա այդ երկու տաղանդավոր արվեստագետների համագործակցության արդյունքում ծնվեց «Կարոտի երգը», (այնուհետև վերանվանվեց «Մարտիկի երգ»), որտեղ անմիջականությամբ ու հուզականությամբ բացահայտված են ռազմաճակատում մարտնչող զինվորի

երազկոտ մտորումները, մտքով տուն սլացող, մարտիկի հոգեկան ապրումները, այսինքն՝ մի սրտաբուխ քնարերգությամբ ու ջերմությամբ բացահայտում են ծննդավայրի սիրո ջերմ զգացմունքը: Սաթյանի երաժշտությանը հատուկ է արտահայտության որոշ մտերմականություն, որը, սակայն, չի «մանրացնում» կերպարը, չի նվազեցնում ստեղծագործության հիմքը կազմող վեհ գաղափարը: Ընդհակառակը, հայրենիքի սիրո վսեմ զգացմունքը այստեղ զարգանում է որպես նվիրական, թանկ, հերոսի՝ ամբողջ ներքնաշխարհի ապրումներից անբաժան մի բան: «Մարտիկի երգը» ամենատարածված երգերից է, նրա արագ տարածմանը նպաստեց այդ երկու հզոր արվեստագետների մարդկային հոգուն ամենահուզիչ զգացմունքներ արթնացնող բանաստեղծությունը և լայնահունչ ու գեղեցիկ մեղեդին:

Ա. Սաթյանը գրել է նաև «Արարատյան հովտի երգեր» վոկալ-սիմֆոնիկ 2 շարքը երգչախմբի, մենակատարների և սիմֆոնիկ նվագախմբի համար, որտեղ գեղարվեստորեն ներկայացված է Արարատյան դաշտավայրի բնակիչների կյանքը և առօրյան: Առաջին շարքը կազմված է 4 մասից՝«Արարատյան հովտի երգը», «Արդյոք գիտե՞ս դու», «Խաղողաքաղ» և «Կոլխոզային քառյակներ»: Ցավոք, վաղաժամ մահը թույլ չտվեց մեծ կոմպոզիտորին ավարտել երկրորդ շարքը:

Սաթյանի հաջորդ մեծ ստեղծագործությունը «Լեռների երգեր» չորսմասանի վոկալ-սիմֆոնիկ սյուիտն է, որը պատմում է իր նախնիների հայրենիքի, Սյունիքի խստաշունչ բնության ու աշխատասեր մարդկանց մասին: Ինչպես միշտ, այստեղ ևս Սաթյանի երաժշտությունը հրապուրում է իր նուրբ մեղեդիներով և սրտաբուխ գեղջկական երգերի անկեղծությամբ: Հարազատ Սյունիքի բանաստեղծական բնանկարի սքանչելի պատկերները («Սարի ծաղիկ», «Զանգեզուր») իրենց արտացոլումն են գտնում Սաթյանի անկեղծ ու գրավիչ երաժշտության մեջ:

Աշոտ Սաթյանի քնարերգական մեծ շնորհի վկայությունն է նաև Գայանեի լայնաշունչ մեներգը «Դավիթ-Բեկ» կինոնկարից (հետագայում օգտագործված կոմպոզիտորի «Դավիթ-Բեկ» անավարտ օրատորիայում՝ որպես արիա), որն աչքի է ընկնում երգային լայն շնչով ու խորը տրամադրությամբ: Գայանեի արիան (խոսք՝ Ա. Իսահակյանի) յուրահատուկ փայլ էր ստանում մեկ այլ տաղանդավոր սյունեցու՝ հայ օպերային թատրոնի հզոր ձայներից մեկի՝ Տաթևիկ Սազանդարյանի փայլուն կատարումով:

«Մի լավ երգ գրողն, ասում են, արդեն կոմպոզիտոր է, իսկ խորապես ազգային երգաբույլի հեղինակը... ուրեմն, ազգի հերոս: Մեր հիմնական զենքը դարեր շարունակ մշակույթն է եղել. երգով ծնվել, աշխատել, մաքառել, կռվել ենք, ինչպես «Մարտիկի երգի» հերոսը «հայրենիքը եւ մայրը սրտում»: Մեր երգն աղավաղողը, ուրեմն պաշտոնապես ճանաչված ազգադավից լավը չէ: Ժամանակիս «երաժշտական» անճաշակ հոսքին կուլ չգնալու համար Սաթյանի քավարանով ավելի հաճախ պիտի անցնենք, մաքրվենք նրա մեղեդիներով: Նման ապաշխարանքներից մինչեւ հոգևոր խնդիրների լուծում, հավատացնում եմ, մի քանի քայլ է»[1]:

Հայ երգի տարածման գործում մեծ դեր են խաղացել երգիչ կատարողնե-

1 https://nakhshkaryan.blogspot.am/2013/01/blog-post_18.html#.WaZ1MfMjHcs, Արա Նախշքարյան,ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՅՍ ՕՐԸ - Աշոտ Սաթյան, Վարուժան Պլուզյան:

րը, որոնց մեջ իր ուրույն տեղն ունի Տաթևիկ Սազանդարյանը: Սյունյաց աշխարհի Խնձորեսկում ծնված դստերը հայրն անվանեց Տաթևիկ՝ ի հիշատակումն Տաթև վանքի: Տաթևիկը սերել էր համեստ ուսուցչի ընտանիքից, բազմազավակ գերդաստանի հինգերորդ զավակն էր: Դեռ չորս տարեկան էլ չկար, որ Սազանդարյանների ընտանիքը լքեց Խնձորեսկը, իր հոդվածներից մեկում երգչուհին նշում է, որ Խնձորեսկում սկիզբ առած իր մանկության օրերից ինքը գրեթե ոչինչ չի հիշում…բացի լերկ ժայռերի տիտանական սյունաշարերից և… երգերից[1]: Սազանդարյանի տաղանդը երևան եկավ այն ժամանակ, երբ նա հանդես էր գալիս գեղարվեստական ինքնագործության կոլեկտիվների ստուգատեսում: Ավարտելով Մոսկվայի հայկական կուլտուրայի տանը կից գործող երաժշտական ստուդիան՝ 1937 թ. մեցցո-սոպրանո Տ. Սազանդարյանն ընդունվեց Երևանի օպերային թատրոն: Այստեղ նա շատ բան սովորեց թե՛ երգչական, թե՛ արտիստական վարպետության առումով: Ինքը՝ Տաթևիկը, առանձնապես բարձր էր գնահատում այն օգնությունը, որ նա ստացել էր տաղանդավոր երգչուհի Հայկանուշ Դանիելյանից և Օպերային թատրոնի դիրիժոր Միքայել Թավրիզյանից: Առաջին պատասխանատու դերը՝ Ալմաստը, որով նա հանդես եկավ հայ արվեստի առաջին տասնօրյակին Մոսկվայում(1939թ.) ունեցավ մեծ հաջողություն, և այդ օրվանից Տաթևիկը դասվեց հայկական օպերային բեմի լավագույն դերակատարների շարքը: Ալմաստը օպերային դրամատուրգիայի ամենաբարդ ու հակասական կերպարներից է, նրա ասերգային բնույթը և որոշ առանձնահատկություններ դժվարին խնդրի առաջ են կանգնեցնում կատարողին, որովհետև կերպարի բացահայտման հիմնական շեշտը դրվում է դերակատարման վրա՝ կատարողից պահանջելով դերասանական լուրջ ունակություններ: Նրա «Ալմաստը» իր բոլոր դրսևորումներում համոզիչ է ու տրամաբանված, որովհետև երգչուհին կարողացել է թափանցել Ա. Սպենդարյանի երաժշտական մտահղացման մեջ և բացահայտել նրա բուն էությունը, իր դերի երաժշտական և բեմական կերպարները դիտել որպես մեկ միասնական ամբողջություն, «դիվային» Ալմաստին կենդանի մարդ դարձնել և վարպետորեն ցույց տալ նրա կյանքի հակասությունները: Տ. Սազանդարյանը թե՛ երգեց, թե՛ խաղաց այս դերը, և լավ խաղի շնորհիվ երգեցողությունը ևս շահեց:

Ձայնային հիանալի տվյալները, նուրբ երաժշտական զգացողությունը, և բեմական վերամարմնավորման սքանչելի շնորհը թույլ տվեցին երգչուհուն գեղարվեստական կատարելությամբ կերտել իրենց բնույթով այնքան տարբեր կերպարներ, ինչպես վրաց քնքուշ ու թովիչ իշխանուհի Թամարի («Դավիթ-Բեկ»), համարձակ ու գործունյա կոլտնտեսուհի Նազելիի («Հերոսուհի»), խրոխտ ու արքայական Փառանձեմի («Արշակ Բ») և այլ կերպարները: Երգչուհին հայ օպերային դերերգերի հետ միաժամանակ վարպետորեն է կատարել նաև համաշխարհային օպերայի լավագույն դերերգերը՝Կարմեն, Ամներիս, Լյուբաշա և այլն:

Բացի օպերային դերերգերից՝ երգչուհին ամենուր կատարել ու տարածել է հայ կոմպոզիտորների կամերային ստեղծագործությունները: Իր գործունեության հենց սկզբից երգչուհին միշտ անդրադարձել է մեծ Կոմիտասի ստեղծագործությանը, ջանք ու եռանդ չի խնայել նրա երգերը արժանի ձևով ու մեկ-

---

1 **Սիմոնյան Կ., Հարությունյան Վ.,** Տաթևիկ Սազանդարյան, Երևան, 1959թ.:

նաբանությամբ կատարելու համար: Խոսքը նախ և առաջ վերաբերում է կոմիտասյան երգերի ոգուն, նրա ճշմարտացի և բարձրարվեստ վերարտադրությանը, որի համար նա Կոմիտասի երգերի հանրապետական մրցույթի ժամանակ ստանում է առաջին մրցանակ:

Տ. Սազանդարյանը առանձնակի նրբությամբ ու զգացմունքայնությամբ է կատարել նաև Ռ. Մելիքյանի, Ա. Սաթյանի, Հ. Ստեփանյանի Ա. Հարությունյանի և մյուս կոմպոզիտորների երգերն ու ռոմանսները: Միշտ ձգտելով խորամուխ լինել կատարվող երգի կամ ռոմանսի բովանդակությանն ու տրամադրությանը, աշխատելով հարազատ մնալ կոմպոզիտորի դավանած գեղարվեստական սկզբունքներին՝ Սազանադարյանը բոլոր դեպքերում այդ երգերն ու ռոմանսները անց է կացնում իր արտիստական պրիզմայի միջով, իր մեկնաբանությունն է տալիս դրանց, իր սեփական վերաբերմունքն է դրսևորում յուրաքանչյուրի կատարման մեջ: Երգչուհին մեծ հաջողությամբ կատարել է նաև գուսանական երգեր՝ դրանք ազատելով օտարամուտ տարրերից, քմահաճ խաղերից, ավելորդ գեղգեղանքներից, դրանք բարձրացնելով իր կատարողական մակարդակին: Ունենալով մեծ ձայնածավալ, լավ երանգավորված, միշտ ամուր ու հավասար հնչող ձայն՝ նա կարողանում է օպերային տարբեր կերպարների կողքին հնչեցնել նաև բազմապիսի երգեր՝ սկսած գուսանականից մինչև Շուբերտի ու Գրիգի ռոմանսները:

Բացի արտիստական գործունեությունից՝ Տաթիկը զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ. 1961-ից դասավանդել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, 1971-77 թթ.՝ Երևանի Գեղարվեստաթատերական ինստիտուտում, 1977-99 թթ-ին՝ կոնսերվատորիայի մեներգեցողության ամբիոնի վարիչ՝ ստեղծելով օպերային երգարվեստի դասավանդման իր «դպրոցը»:

Սազանդարյանը դարձավ հայ ազգային երգեցողական ավանդույթների արժանավոր ժառանգորդը, միաժամանակ այդ ավանդույթը հարստացնելով իր վառ անհատականությամբ, երգչային պրոֆեսիոնալ նոր հնարավորություններով, ժողովրդական երգեցողության նոր ու թարմ ինտոնացիաներով, որ ժառանգել էր Սյունյաց սարերում և ապա կատարելագործել պրոֆեսիոնալ երգեցողության կանոններով:

«Տաթևիկը թև առավ ու թռավ Սյունաց սարերից մինչև հայոց երգի բարձրիկ լեռնաշխարհը: Նրա ձայնը ուժգնացավ, ծավալվեց, սավառնեց հայրենի լեռներից, հայրենի երկրից հեռու, հնչեց օտար ափերում, այնտեղ ուր չեն էլ լսել Տաթևի սրտառուչ ավանդությունը»[1]:

Ցավոք, մեկ հոդվածի մեջ հնարավոր չէ անդրադառնալ Սյունյաց աշխարհի բոլոր տաղանդավոր երաժիշտների գործունեությանը, սակայն ցանկանում ենք անպայման ներկայացնել Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետի մեր շատ սիրելի դասախոսներին՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ՀՀ վաստակավոր մանկավարժ Յուրի Վաղարշակի Յուզբաշյանին և ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Արկադի Արամի Շեկունցին, որոնք այսօր էլ մեծ եռանդով ու պատասխանատ-

1 **Սիմոնյան Կ., Հարությունյան Վ.,** Տաթևիկ Սազանդարյան, Երևան, 1959թ., էջ 132:

վությամբ կրթում և դաստիարակում են հանրապետության երաժիշտ մանկավարժներին:

Յ. Յուզբաշյանը ծնվել է Գորիսում: Ավարտելով Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի խմբավարական բաժինը՝ ստացել է երգչախմբի ղեկավարի և մանկավարժի որակավորում: Ուսմանը զուգահեռ Յուզբաշյանը աշխատել է հանրակրթական դպրոցում որպես երաժշտության ուսուցիչ և խմբավար: Այնուհետև աշխատել է Երևանի քաղաքաշինարարական մեթոդկաբինետում որպես երաժշտություն առարկայի մեթոդիստ, ապա՝ Ուսուցիչների կատարելագործման քաղաքային ինստիտուտում որպես երաժշտության կաբինետի վարիչ: 1965թ-ից մինչև այսօր աշխատում է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի՝ սկզբում՝ տարրական ուսուցման և մեթոդիկայի ֆակուլտետում, այնուհետև՝ գեղարվեստական կրթության, իսկ 1987-98թթ՝ գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, 2001-2010 թթ.՝ խմբավարության և ձայնադրման ամբիոնի վարիչ:

Իր աշխատանքի ընթացքում Յուզբաշյանը ծավալել է գիտամանկավարժական արդյունավետ գործունեություն. 1967թ.-ից համահեղինակ և հեղինակ է 1-8-րդ դասարանների երաժշտության 26 դասագրքերի, որոնք ստեղծելիս առաջնորդվել է մեծ Կոմիտասի գաղափարներով՝ երեխայի երաժշտական դաստիարակության հիմքը պետք է լինի ազգային երաժշտությունը և ազգային մտածողությունը: Հեղինակ է նաև «Երաժշտություն» առարկայի չափորոշչի, ծրագրերի, մեթոդական ձեռնարկների, ստեղծել է նաև դասագրքերին կից ֆոնոքրեստոմատիա: Յուզբաշյանը հեղինակ է նաև 120-ից ավելի գիտամեթոդական հոդվածների, որոնց համար հիմք է հանդիսացել նրա երկարամյա մանկավարժական փորձը՝ սկսած դպրոցից մինչև համալսարան: Այսօր էլ դոկտոր, պրոֆեսոր Յ. Յուզբաշյանը մեծ հաջողությամբ շարունակում է կրթել երաժիշտ մանկավարժների նորանոր սերունդներ՝ հանուն հայ ազգային երաժշտության զարգացման:

Իր արգասավոր աշխատանքի համար Յ. Յուզբաշյանը գնահատվել և պարգևատրվել է կառավարական մի շարք պարգևներով՝ ՀՀ վաստակավոր մանկավարժ, Խ. Աբովյանի անվան մեդալ, նաև Նյու – Յորքի միջազգային ակադեմիայի պատվավոր ակադեմիկոս, անդամակցում է երեխաների և պատանիների երաժշտական դաստիարակության հունգարական և ֆիննական միջազգային միություններին: 2000 թ.-ից ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի արվեստագիտության գծով գիտական աստիճաններ շնորհող խորհրդի անդամ: 2004-ից մինչև օրս ղեկավարում է ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի «Երաժշտություն» առարկայական հանձնաժողովը:

Սյունիքի Տեղ գյուղում է ծնվել նաև ԵՊՄՀ-ի մյուս պրոֆեսորը՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, խմբավար, մանկավարժ Արկադի Արամի Շեկունցը: Ավարտելով Ուկրաինայի Պոլտավա քաղաքի երաժշտական ուսումնարանը և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, խմբավարական և փողային բաժինները՝ նա անցել է երաժշտամանկավարժական գործունեության: Ա. Շեկունցի անունը սերտորեն կապված է հանրապետության ռադիոյի և հեռուստատեսության երաժշտական հաղորդումների հետ. այդ տարի-

ներին դժվար էր գտնել որևէ հաղորդում, որի երաժշտական ձևավորումը նրանը չլիներ: Նա կատարել է շուրջ 150 հեռուստաֆիլմերի և ռադիոհաղորդումների երաժշտական ձևավորումներ, հեղինակ է նաև երաժշտական ֆիլմերի սցենարների: Դրան զուգահեռ՝ Շեկունցը դասավանդել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետում, որտեղ ստեղծել է կամերային նվագախումբ, ղեկավարել խմբավարության ու ձայնադրման ամբիոնը, այնուհետև գեղարվեստական կրթության ֆակուլտետը:

2008-ից մինչև այսօր Արկադի Շեկունցը ղեկավարում է համալսարանի Մշակույթի կենտրոնը: Նրա նախաձեռնությամբ կազմակերպվում են բազմաթիվ մշակութային միջոցառումներ, համերգներ, հանդիպումներ հանրապետության անվանի արվեստագետների, երաժշտական կոլեկտիվների հետ, որոնք նպաստում են ապագա մանկավարժների գեղագիտական դաստիարակությանը և ձևավորում նրանց արժեհամակարգը: Արկադի Շեկունցը մեծ գործ է կատարում նաև դպրոցական երգչախմբերի կայացման ու թվաքանակի ավելացման գործում, նրա նախաձեռնությամբ արդեն 11 տարի է կազմակերպվում է ՀՀ հանրակրթական դպրոցների երգչախմբերի հանրապետական փառատոներ, որին մասնակցում են Երևանի և հանրապետության մարզերի այդ թվում նաև Սյունիքի դպրոցների երգչախմբերը:

Շեկունցը նաև բազմաթիվ մանկավարժամեթոդական ձեռնարկների և խմբերգային ժողովածուների հեղինակ է՝ «Երգչախմբային արվեստ», «Հայ խմբավար կոմպոզիտորներ», «Սկսնակ խմբավարը», «Երգեր դպրոցականների համար» և այլն: Ա. Շեկունցն է ստեղծել նաև Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և Գորիսի պետական համալսարանի օրհներգերը:

Այսպիսով, սկսած միջնադարից մինչև մեր օրերը Սյունյաց աշխարհի տաղանդավոր երաժիշտները մեծ ավանդ են ունեցել հայ երաժշտական արվեստի զարգացման ու ճանաչման գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրյան Ա., Շուշին Անդրկովկասի կոնսերվատորիա, Ակունք, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1(7), 2013:

2. Բալոյան Հ., Երաժիշտ-մանկավարժների սերունդներ կերտողը, Կրթություն շաբաթաթերթ, 11. 11. 2015:

3. Բարսամյան Ա., Բրուտյան Մ., Սովետահայ երգարվեստ, Սովետական Հայաստանի երաժշտությունը, հոդվածների ժողովածու, Հայաստան հրատ., Երևան 1973:

4. Թահմիզյան Ն., Երաժշտությունը հին և միջնադարյան Հայաստանում, Սովետական գրող հրատ., Երևան, 1982:

5. Կուշնարյան Ք., Մուրադյան Մ., Գյոդակյան Գ., Հայ երաժշտությունը 20-րդ դարում, Ակնարկ հայ երաժշտության պատմության, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երևան.1963:

6. Յուզբաշյան Յ., Երաժշտությունը Սյունյաց աշխարհի դպրոցներում, պատմաբանասիրական հանդես, h 3, Երևան, 1962:

7. Պլուզյան Վ., ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՅՍ ՕՐԸ - Աշոտ Սաթյան, https://nakhshkaryan.blogspot.am/2013/01/blog-post_18.html#.WaZ1MfMjHcs, Արա նախշքարյան:
8. Սիմոնյան Կ., Հարությունյան Վ., Տաթևիկ Սազանդարյան, ՀԹԸ հրատ.,Երևան 1959:

ВКЛАД ЗНАМЕНИТЫХ МУЗЫКАНТОВ КОРНЯМИ ИЗ СЮНИКА В РАЗВИТИИ АРМЯНСКОГО ИССКУСТВА - ГАЙАНЕ ТАДЕВОСЯН - В докладе представлены талантливые композиторы корнями из Сюника, Григор Сюни, Ашот Сатян, знаменитая оперная певица Татевик Сазандарян, здравствующие в наши дни музыканты – педагоги Юрий Юзбащян и Аркадий Шекунц. Глубоко раскрыта их творческая и общественная деятельность.Обобщая, нужно сказать, что, начиная со средних веков и до наших дней знаменитые музыканты Сюника имели огромный вклад в развитии армянского исскуства.

Ключевые слова: Сюник, 20 - ый век, певческая, хоровая, оперная музыка, педагогика, Григор Сюни, Ашот Сатян, Татевик Сазандарян, Юрий Юзбащян, Аркадий Шекунц.

THE COMMITMENT OF SYUNIK MUSICIANS IN THE ARMENIAN CULTURE OF THE 20th CENTURY - GAYANE TADEVOSSYAN - The talented composers of 20th century from Syunik region, such as Gr.Syuni, A. Satyan, singer T. Sazandaryan and music pedagogues Y.Yuzbashyan and A. Shekunts are represented in the report. Their compositions and social activites are represented in details which contributed to the development and evaluation of Armenian culture of 20th century. To sum up, we should say that starting from middles ages up to present days, the musicians from Syunik have had a big contribution in the development of Armenian culture.

Key words: Syunik, chorus and opera music, Gr. Syuni, A.Satyan, T. Sazandaryan, pedagogy, Y.Yuzbashyan, A. Shekunts.